ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Նկատի ունենալով, որ սույն քաղաքացիական գործով հայցվորները նախապես վճարել են պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Արագած» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ վերջինիս և «ԱՐԱԳԱԾ» ՍՊ ընկերության միջև 31.05.2017 թվականին կնքված N ՄԱԱՇՁԲ–13–15 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին 03.03.2026 թվականի թիվ ՊՆ12/414 գրությամբ ներկայացված որոշումը (ծանուցումը) և ընկերությանը Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 11.03.2026 թվականի N 208 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**